

ՀԱՍՏԱՏՄԱԿԻՐ
**ՎՊԲ ՄԱՍՏԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԾՎԿՈՎԻ ԲՈՒՅՈՒՆԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՐՊԱԼՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՀԱՍՏԱՏՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով բույսերի գենետիկական բազմազանության պահպանման կարեւորությունը ներկա եւ ապագա սերունդների համար,

հաշվի առնելով բուսական ռեսուրսների ազգային հավաքածուների լրացման անհրաժեշտությունը՝ Կողմերի սելեկցիոն ծրագրերում դրանց հետագա օգտագործման համար, նկատի ունենալով ազգային հավաքածուների բույսերի և մուշկների պահպանման եւ ռւսումնասիրման նոր արդյունավետ մեթոդների մշակման անհրաժեշտությունը,

Ենթադրությունը՝ Կողմերի գենետիկական ռեսուրսների ռւսումնասիրման բնագավառում կուտակված փորձի օգտագործման համար գիտական ներուժի միավորման եւ գյուղատնտեսական մշակաբույսերի նոր բարձրաբերք տեսակների ստացման նպատակով ազգային հավաքածուներից առավել հեռանկարային, բարձր արդյունավետություն ունեցող եւ կայուն ելակետային նյութի առանձնացման ցանկությունից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորեւ բերված հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունները՝

բույսերի գենետիկական ռեսուրսների եւ դրանց վայրի ցեղակիցների գենետիկական բազմազանություն,

բույսերի գենետիկական ռեսուրսներ՝ սելեկցիոն ծրագրերում օգտագործման համար արժեքավոր գեների պոտենցիալ աղբյուր հանդիսացող բուսական նյութ,

մշակաբույսեր՝ բուծվող բույսեր,

բույսերի գենետիկական ռեսուրսներ՝ բույսերի գենետիկական ռեսուրսների հավաքածուներ, որոնք գտնվում են պետության տնօրինության տակ,

գյուղատնտեսական մշակաբույսերի համատեղ տեսակներ եւ հիբրիդներ՝ պայմանագրերի, համաձայնագրերի կամ կոնտրակտների շրջանակներում համատեղ միջազգային սելեկցիոն ծրագրերի հիման վրա ստեղծված տեսակներ եւ հիբրիդներ,

համատեղ գիտարշավներ՝ Կողմերից մեկի տարածքում իր մասնագետների մասնակցությամբ իրականացվող՝ բույսերի գենետիկական բազմազանության մուշկների հավաքման գիտարշավներ:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերն իրականացնում են իրավահավասար, փոխահավետ գիտատեխնիկական համագործակցություն՝ մշակաբույսերի գենետիկական ռեսուրսների փոխահավետ փոխանակման իրականացում,

Կողմերի համագործակցության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

մշակաբույսերի եւ դրանց վայրի ցեղակիցների գենետիկական ռեսուրսների փոխահավետ փոխանակման իրականացում,

բույսերի գենետիկական ռեսուրսների օգտագործման եւ պահպանման մեթոդների մշակման ուղղությամբ համատեղ ծրագրերի իրականացում,

մասնակցություն համատեղ գիտարշավներին՝ բույսերի գենետիկական բազմազանության ազգային

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերի համագործակցության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

մշակաբույսերի եւ դրանց վայրի ցեղակիցների գենետիկական ռեսուրսների փոխահավետ փոխանակման իրականացում,

բույսերի գենետիկական ռեսուրսների օգտագործման եւ պահպանման մեթոդների մշակման ուղղությամբ համատեղ ծրագրերի իրականացում,

մասնակցություն համատեղ գիտարշավներին՝ բույսերի գենետիկական բազմազանության ազգային

հավաքածուների փոխլրացման համար,
առանձին մշակաբույսերի եւ դրանց խմբերի համատեղ հավաքածուների ստեղծում,
Եկոլոգիական համատեղ հետազոտությունների անցկացում՝ գյուղատնտեսական
մշակաբույսերի հեռանկարային տեսակների եւ հիբրիդների ստեղծման համար՝
Ելակետային լյութի ստացման նպատակով,

ԽՄՀՄ նախկին հանրապետությունների գենետիկական բանկերում համատեղ
հավաքած

բույսերի գենոֆոնդի նմուշներին փոխշահավետ մուտքի ապահովում,

աջակցություն բույսերի գենետիկական ռեսուրսների ազգային բանկերի
ստեղծմանը՝ գենոֆոնդի, աշխատանքի մեթոդների եւ տեխնոլոգիաների փոխանակման
հիման վրա,

ազգային գենոֆոնդի վերաբերյալ համատեղ համակարգչային տվյալների բազաների
ստեղծում՝ սելեկցիոն ծրագրերում բույսերի գենետիկական ռեսուրսների արագացված
օգտագործման համար,

Կողմերի օրենսդրության մերձեցում՝ Կողմերի միջեւ բույսերի գենետիկական
ռեսուրսների փոխանակումը հեշտացնելու նպատակով,

աջակցություն գենոֆոնդի նմուշների ազատ եւ առանց մաքսի տեղափոխմանը
սահմաններով՝ հաշվի առնելով ֆիտոսանիտարական հակողության պահանջները,

կադրերի պատրաստում եւ որակավորման բարձրացում՝ բույսերի գենետիկական
ռեսուրսների հետ աշխատելու համար:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերն իրականացնում են հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի
սելեկցիայի ուղղությամբ համատեղ ծրագրերի մշակում եւ իրագործում՝ իրենց
մշակաբույսերի գենետիկական ռեսուրսների ազգային ծրագրերի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կստեղծեն աշխատանքային խմբեր՝ բույսերի
գենոֆոնդի հավաքման եւ օգտագործման հույժ կարեւոր հիմնախնդիրների լուծման
համար, ինչպես նաև՝ համատեղ ոչ կառավարական միավորումներ ու
ձեռնարկություններ՝ համատեղ ծրագրերն իրականացնելիս ստացվող բույսերի
սելեկցիայի բնագավառում նվազումների իրագործման նպատակով:

Կողմերն աջակցում են իրենց տարածըներում ստեղծված եւ պետական
գրանցամատյաններում գրանցված գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակների եւ
հիբրիդների օգտագործմանը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրին համապատասխան ստանձնած
պարտավորությունների հետ կապված ծախսերը: Համատեղ միջոցառումների
ֆինանսավորման հարցերը քննարկվում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում եւ
լուծվում են փոխընդունելի պայմանների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 7

Առեւտրային հիմքով համատեղ սելեկցիոն ծրագրերի մշակման կամ առեւտրային
արժեք ունեցող համատեղ գործունեության արդյունքների ստացման դեպքում Կողմերը
որոշում են իրենց բաժնեմասային մասնակցությունը դրանցում կամ հատուկ
պայմանագիր են կնքում:

ՀՈԴՎԱԾ 8

Բույսերի համատեղ տեսակների եւ հիբրիդների սեփականության իրավունքը սույն Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետությունում ձեռք է բերվում եւ իրականացվում այն Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում ծագում է այդպիսի իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերը պահպանում են սույն Համաձայնագրին համապատասխան կատարվող աշխատանքների եւ ստացված գիտատեխնիկական արդյունքների մասին տեղեկատվության կոնֆիդենցիալությունը, եթե փոխանցող Կողմը կանխապայման է դրել, որ այն գաղտնի բնույթ ունի: Այդ արդյունքների մասին տեղեկությունը կարող է հրապարակվել ըստ Կողմերի փոխադարձ պայմանավորվածության դրա պատշաճ իրավական պահպանության ապահովության հետո: Գաղտնիության ապահովման ուղղությամբ պարտավորությունն ուժի մեջ է մտնում փոխանցող Կողմի սահմանած ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերն անց են կացնում գիտնականների համատեղ հանդիպումներ, սիմպոզիումներ ու գիտաժողովներ՝ նվիրված մշակաբույսերի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրմանը եւ օգտագործմանը, ինչպես նաև իրականացնում են գիտական եւ գործնական հետաքրքրություն ներկայացնող հարցերով մասնագիտական գրականության փոխանակում:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերը լիազորում են Ագրոարդյունաբերական համակրի հարցերով միջկառավարական խորհրդին՝ ազգային գյուղատնտեսական գիտությունների ակադեմիաների մասնակցությամբ իրականացնելու սույն Համաձայնագրի կատարման ուղղությամբ գործունեության համակարգում:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագրի իրագործումն իրականացվում է թե՛ Կողմերի, թե՛ Նրանց իրավասու մարմինների կնքած բազմակողմ եւ երկկողմ համաձայնագրերի հիման վրա, ինչպես նաև Կողմերի տնտեսվարող սուբյեկտների կնքած պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրը չի շոշափում Կողմերի՝ այլ միշազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները եւ չի խոչընդոտում Կողմերի մասնակցությանը բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ օգտագործման բնագավառում պետությունների համագործակցության միշազգային ծրագրերին:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագրը բաց է դրա նպատակներն ու սկզբունքներն ընդունող այլ պետությունների կողմից միանալու համար՝ այդպիսի միացման մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

Միացած պետությունների համար Համաձայնագրին ուժի մեջ է մտնում այդպիսի միացմանը Կողմերի համաձայնության մասին վերջին ծանուցումը ավանդապահի

ստանալուց 30 օր անց:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ Եւ լրացնումներ:

Փոփոխություններն ու լրացնումները ծեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այս Կողմերի համար, որոնց օրենսդրությունը դրա ուժի մեջ մտնելու համար պահանջում է անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարում՝ համապատասխան փաստաթղթերը ավանդապահին հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 18

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարածգվի հետագա հնգամյա ժամանակաշրջաններով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

ՀՈԴՎԱԾ 19

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ ավանդապահին այդ մասին գրավոր ծանուցում հղելով:

Կատարված է Մինսկ քաղաքում 1999 թվականի հունիսի 4-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահպում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի հոկտեմբերի 24-ից: